ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **25/հուլիսի /2023 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....10..... անդամներ:

Բացակա էին՝ Մարիետ Մկրտչյանը, Այուշանա Լուսինյանը, Ծիրայր Բարայանը և Խաչատուր Արամեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 25-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*՝

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի փոփոխություններ հաստատելու, բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման փուլի գործընթացը կազմակերպելու՝ առաջարկված ծրագրերին, քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին հավանություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----------10 Դեմ----------0 Ձեռնպահ----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ՝ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ, 33-րդ հոդվածի 4-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 4,000.0 հազար ՀՀ դրամով:

2. Համահայկական խաղերին մասնակցելու և Ջերմուկ համայնքում «Ծիրանի փառատոն» համապետական միջոցառման կազմակերպման, վերջիններիս հետ կապված անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար սույն որոշման 1-ին կետում նշված 4,000.0 հազար ՀՀ դրամից համապատասխանաբար 1,000.0 հազար և 3,000.0 հազար ՀՀ դրամներն ուղղել «08-06-01-55-հանգիստ, մշակույթ և կրոն» գործառնական դասակարգման համապատասխանաբար «4637- այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «4239- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական հոդվածներին:

3. Ընդունել ի գիտություն, որ Ջերմուկ համայնքում «Ծիրանի փառատոն» համապետական միջոցառումը ըստ ծախսերի կատարման պայմանագիր-նախահաշվի կազմում է 7,565.0 հազար ՀՀ դրամ. պայմանագրային գումարի տարբերության՝

4,565.0 հազար ՀՀ դրամի չափով բյուջեի դասակարգման գործառնական ոլորտների տնտեսագիտական հոդվածների միջև կատարել ներքին վերաբաշխումներ՝ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 102-Ն որոշման համաձայն:

4. Հաստատել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ՝ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 37-րդ և 84-րդ հոդվածների դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման փուլում հավանություն տալ համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված՝ հաղթող ճանաչված առաջարկին՝ *«Կավը մաքրում է հոգին»* ծրագրին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Համայնքի նախաձեռնությամբ՝ հայեցողական սկզբունքով, ըստ ֆինանսական հնարավորությունների, իրականացնել նաև *«Տաֆտինգ ակումբ»-ի ստեղծում»* ծրագիր–առաջարկը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ի գիտություն ընդունել Ջերմուկ համայքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի կողմից ծրագիր–առաջարկներ նախնական գնահատման, պլան–ժամանակացույցի կազմման, ծրագրերի գնահատման չափանիշների, խնդիրների առաջնահերթությունների սահմանման վերաբերյալ կատարված աշխատանքները՝ համաձայն 3-6–րդ հավելվածների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ----10---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բացակա
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	բացակա
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Վարդան Սարգսյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____